EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA

19 մարտի, 2012թ.

Մամլո հաղորդագրություն
Press release

Համահայկական Օլիմպիադայի մասին

Կանադայում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը նախատեսում է առաջին անգամ անցկացնել Համահայկական օլիմպիադա՝ մաթեմատիկա, ֆիզիկա եւ ինֆորմատիկա առարկաներից:

Կից ներկայացնում ենք օլիմպիադայի մասին հայտարարությունը, անցկացման պայմանների մասին ամփոփագիրը, մասնակցության հայտաձեւը եւ ս.թ. հուլիսի 22-27-ը Երեւանում կայանալիք երկրորդ փուլի ծրագրի նախագիծը:

Առդիր՝ 8 թ:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613.234.3710 Fax: 613.234.3444

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2012 թվականին կազմակերպում է դպրոցականների համահայկական օլիմպիադա՝ ֆիզիկա, մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաներից:

Օլիմպիադայի նպատակն է՝ համախմբել Սփյուռքի հայ երիտասարդների լայն շրջանակները ազգային կառույցների և կրթության շուրջ, ներգրավել հայերենին չտիրապետող երիտասարդներին Հայաստան-Սփյուռք կապերի մեջ, նպաստել ֆիզիկամաթեմատիկական առարկաների հանդեպ երիտասարդության հետաքրքրության բարձրացմանը, խթանել առողջ մրցակցության պայմաններում երիտասարդների գիտելիքների ու ստեղծագործական կարողությունների դրսևորմանը, նպաստել առավել տաղանդավոր երիտասարդների հայտնաբերմանը Սփյուռքում և Հայաստանում:

Օլիմպիադային կարող են մասնակցել 14 տարեկանից բարձր տարիքի դպրոցականներ: Մրցույթները կայանալու են երկու տարիքային խմբերի՝ 14-15 և 16-18 տարեկանների համար:

Օլիմպիադան անցկացվելու է երեք փուլով՝ նախապատրաստական և երկու մրցութային: Նախապատրաստական և առաջին մրցույթային փուլերը կազմակերպվում են տեղերում՝ օլիմպիադայի կազմակերպիչների (ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատանքային խմբի) օգնությամբ հեռավար կարգով: Երկրորդ մրցութային փուլը, որը անցկացվելու է առաջին փուլում հաղթողների համար, կազմակերպվելու է **ս.թ. հուլիսի 22-27-ը Երևանում**:

Օլիմպիադայի լեզուն հայերենն է: Անհրաժեշտության դեպքում՝ առաջադրանքները օլիմպիադայի կազմակերպիչների կողմից կարող են ներկայացվել ռուսերեն և անգլերեն լեզուներով: Այլ լեզուների պարագայում՝ առաջադրանքների թարգմանությունը իրականացվում է կրթօջախների/համայնքների կողմից:

Օլիմպիադայի հաղթող են համարվում երկրորդ փուլում հաղթած մասնակիցները: Հաղթողները կստանան դիպլոմներ և նվերներ:

Երևանում գտնվելու ընթացքում պատվիրակների համար նախատեսված են նաև տարաբնույթ մշակութային, ուսուցողական և ժամանցային միջոցառումներ:

Օլիմպիադային համահայկական բնույթ հաղորդելու համար հայցում և ակնկալում ենք հայկական համայնքների, ազգային-հասարակական հաստատությունների և կազմակերպությունների, Թեմական և կրթական խորհուրդների հատուկ ուշադրությունն ու աջակցությունը: Ուրախ կլինենք բոլոր հայկական կրթօջախներից պատվիրակներ ընդունելու համար:

Օլիմպիադայի երկրորդ փուլի ընթացքում մասնակիցների և ուղեկցողների կեցության, սննդի և շրջագայության ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

Օլիմպիադային մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **ս.թ. մարտի 25-ը** լրացնել մասնակցության հայտը և այն ուղարկել hamahaykakan.olimpiada@gmail.com էլեկտրոնային հասցեով: **Գրանցման ենթակա են կրթօջախները/համայնքները:** Աշխատանքները կազմակերպելու համար օլիմպիադայի կազմակերպիչներն ակնկալում են համագործակցություն կրթօջախների/համայնքների կողմից առաջադրված մեկ կազմակերպիչ-համադրողի և ղեկավար(ներ)ի հետ:

Կազմակերպիչ-համադրողը պատասխանատու է օլիմպիադայի կազմակերպիչների հետ համագործակցության, տեղում աշակերտներին հավաքագրելու, նախապատրաստական փուլի աշխատանքը և առաջին փուլի մրցույթը կազմակերպելու համար:

Ղեկավար(ներ)ը իրականացնում է(են) սաների նախապատրաստումը օլիմպիադային և պատասխանատու է(են) այլ ընթացիկ մասնագիտական խնդիրների համար: Ղեկավարը պետք է տիրապետի հայերենին:

Օլիմպիադայի հետ կապված մանրամասներ և լրացուցիչ տեղեկություններ կտեղադրվեն www.olymp.am կայքում:

Սույն հայտարարությանը կցվում է օլիմպիադայի անցկացման պայմանների, կարգի վերաբերյալ ամփոփագիրը, մասնակցության հայտաձևը և օլիմպիադայի երկրորդ փուլի ծրագրի նախագիծը: Վերջինները կարելի է գտնել նաև Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պաշտոնական www.edu.am և Կրթական տեխնոլոգիաների կենտրոնի www.armedu.am կայքէջերում՝ «Սփյուռք» բաժնում:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.

հեռ. +374 10 58-13-91

ֆաքս. +374 10 52-73-43

էլ.փոստ. spyurq@yahco.com, info@olymp.am

Կայքէջ. www.edu.am, www.armedu.am

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի
համահայկական հեռավար օլիմպիադայի անցկացման

Նպատակները.

- ազգային կառույցների և կրթության շուրջ համախմբել Սփյուռքի հայ երիտասարդների լայն շրջանակները,
- ներգրավել հայերենին չտիրապետող երիտասարդներին Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման գործում,
- նպաստել բնագիտական առարկաների հանդեպ երիտասարդության հետաքրքրության բարձրացմանը,
- հայտնաբերել տաղանդավոր երիտասարդներին Սփյուռքում և Հայաստանում:

Կազմակերպիչը.

Օլիմպիադայի նախաձեռնողն ու կազմակերպիչը հանդիսանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Հենակետային հաստատությունը.

Միջոցառումը իրականացվում է Երևանի պետական համալսարանին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցում:

Օլիմպիադայի ոլորտները.

- մաթեմատիկա
- ինֆորմատիկա
- ֆիզիկա

Մասնակիցները.

Օլիմպիադայի մասնակիցներ կարող են դառնալ 8-րդ և ավելի բարձր դասարանների բոլոր այն հայ դպրոցականներ, ովքեր սովորում են հայկական կամ ոչ հայկական ամենօրյա դպրոցներում:

Մրցույթները կազմակերպվելու են երկու տարիքային խմբերի համար.

- 14-15 տարեկան՝ 1-ին խումբ
- 16-18 տարեկան՝ 2-րդ խումբ

Մասնակցության գրանցման պայմանները.

Օլիմպիադային մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը և այն ուղարկել hamahaykakan.olimpiada@gmail.com էլեկտրոնային հասցեով: Գրանցման ենթակա են համայնքները/կրթօջախները (այսուհետև՝ տեղի կենտրոնները) ի դեմս 1 կազմակերպիչ-համադրողի և ղեկավար(ներ)ի:

Կազմակերպիչ-համադրողը պատասխանատու է օլիմպիադայի կազմակերպիչների հետ համագործակցության, տեղում աշակերտներին հավաքագրելու, նախապատրաստական փուլի աշխատանքը և առաջին փուլի մրցույթը կազմակերպելու համար:

Ղեկավար(ներ)ը իրականացնում է(են) սաների նախապատրաստումը օլիմպիադային և պատասխանատու է(են) այլ ընթացիկ մասնագիտական խնդիրների համար: Ղեկավարը պետք է տիրապետի հայերենին:

Օլիմպիադայի կազմակերպումն և անցկացման կարգը.

Օլիմպիադան անցկացվում է երեք փուլով՝ նախապատրաստական և երկու մրցութային:

Նախապատրաստական և առաջին մրցութային փուլերը անցկացվում են հեռավար կարգով: Երկրորդ մրցութային փուլը՝ առաջին մրցութային փուլում հաղթողների համար, կազմակերպվելու է Երևանում:

Նախապատրաստական փուլում օլիմպիադայի կազմակերպիչները 2 անգամ հրապարակելու են առաջադրանքներ, խնդիրներ www.olymp.am կայքում և առաջարկելու են աշակերտներին մեկ-երկու շաբաթվա ընթացքում աշխատել դրանց լուծման ուղղությամբ: Ժամկետը լրանալուց հետո նույն կայքում հրապարակվելու են առաջադրանքների լուծումները:

Առաջին փուլում մրցութային առաջադրանքները ուղարկվելու են կազմակերպիչ-համադրողին, որը սահմանված ժամկետում պետք է կազմակերպի մրցույթը, մասնակիցների աշխատանքների ստուգումը և կազմակերպչին փոխանցի մասնակիցների ցուցակը՝ իրենց կողմից հավաքած միավորների մասին նշումով:

Երկրորդ մրցութային փուլի կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը կրում է օլիմպիադայի կազմակերպիչը:

Օլիմպիադայի լեզուն.

Օլիմպիադայի լեզուն հայերենն է: Անհրաժեշտության դեպքում՝ առաջադրանքները օլիմպիադայի կազմակերպիչների կողմից կարող են ներկայացվել ռուսերեն և անգլերեն լեզուներով: Այլ լեզուների պարագայում՝ առաջադրանքների թարգմանությունը իրականացվում է ղեկավար(ներ)ի կողմից:

Արդյունքների ամփոփում և պարգևատրում.

Օլիմպիադայի հաղթող են համարվում երկրորդ փուլում հաղթած մասնակիցները: Հաղթողները կպարգևատրվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության դիպլոմներով և նվերներով:

Ֆինանսավորում

Երևանում օլիմպիադայի ընթացքում մասնակիցների և ուղեկցողների կեցության, սննդի և շրջագայության ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

Օլիմպիադայի ժամանակացույցը.

Մասնակցության հայտերի ներկայացում	մինչև մարտի 25-ը
Նախապատրաստական աշխատանք	մինչև մայիսի 6-ը
Առաջին փուլ	մինչև հունիսի 10-ը՝ խորհրդակցաբար
Երկրորդ փուլ	հուլիսի 22-27-ը

Այլ

Օլիմպիադայի հետ կապված մանրամասներ և լրացուցիչ տեղեկություններ կտեղադրվեն www.olymp.am կայքում:

Լրացուցիչ հարցերի և պարզաբանումների համար կարելի է դիմել.

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

hamahaykakan.olimpiada@gmail.com էլեկտրոնային հասցեով կամ

374 10 58-13-91 հեռախոսահամարով

Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց

info@olymp.am էլեկտրոնային հասցեով

ՖԻԶԻԿԱՅԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2012

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Մասնակցության հայտը լրացնում է կազմակերպիչ -համադրողը

1. Կազմակերպիչ-համադրողի անձնական տվյալները.

Անուն _____ Ազգանուն _____

Երկիր և բնակավայր _____

Աշխատանքի վայրը և պաշտոնը _____

_____

Կապի տվյալներ _____/_____
հեռախոսներ

E-mail /պարտադիր է/ _____

2. Տեղեկություններ ղեկավար(ներ)ի մասին.

Անուն _____ Ազգանուն _____

Կապի տվյալներ _____/_____
հեռախոսներ

E-mail /պարտադիր է/ _____

1. Ո՞ր օլիմպիադայի անցկացմանն աշխատանքն է ղեկավարում (կարելի է նշել երկուսը կամ մեկը) և ո՞ր տարիքայի խմբում է նախատեսվում աշակերտների մասնակցությունը.

Ֆիզիկայի ☐	Մաթեմատիկայի ☐	Ինֆորմատիկայի ☐
14-15 ☐	14-15 ☐	14-15 ☐
16-18 ☐	16-18 ☐	16-18 ☐

2. Ո՞ր լեզվով է նախատեսվում աշակերտների մասնակցությունը օլիմպիադային.

Արևմտահայերեն ☐ Արևելահայերեն ☐ Ռուսերեն ☐

Անգլերեն ☐ Այլ ☐

ԾՐԱԳԻՐ

22 հուլիս, կիրակի	
	Մասնակիցների ժամանում
19.00	ԸՆԹՐԻՔ
I օր, 23 հուլիս, երկուշաբթի	
10.00	ՆԱԽԱՃԱՇ
11.00-12.00	Մասնակիցների խաղ-ծանոթացում
12.00-14.00	Հանգիստ
14.00-15.00	ՃԱՇ
15.00	Շրջայց Երևանում
20.00	ԸՆԹՐԻՔ
II օր, 24 հուլիս, երեքշաբթի	
09.00-10.00	Նախաճաշ
10.00-13.00	Մաթեմատիկայի օլիմպիադայի անցկացում
13.00-14.00	Հանգիստ
14.00-15.00	Ճաշ
15.00-19.00	Մշակութային ծրագիր
19.00-20.00	Ընթրիք
III օր, 25 հուլիս, չորեքշաբթի	
9.00-10.00	Նախաճաշ
10.00-13.00	Ֆիզիկայի օլիմպիադայի անցկացում
13.00-14.00	Հանգիստ
14.00-15.00	Ճաշ

15.00-19.00	Մշակութային ծրագիր
19.00-20.00	Ընթրիք

IV օր, 26 հուլիս, հինգշաբթի

9.00-10.00	Նախաճաշ
10.00-13.00	Ինֆորմատիկայի օլիմպիադայի անցկացում
13.00-14.00	Հանգիստ
14.00-15.00	Ճաշ
15.00-19.00	Մշակութային ծրագիր

V օր, 27 հուլիս, ուրբաթ

9.00-10.00	Նախաճաշ
11.00-12.30	Փակում, հաղթողների հայտարարում
13.00-14.00	ՃԱՇ
14.00-ից	Մասնակիցների մեկնում